ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«27» հոկտեմբերի 2015թ. N 167

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի N 238 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, և հիմք ընդունելով «Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N18, «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2015 թվականի հոկտեմբերի 21-ի N14 գրությունները

որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2010 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների կազմերը հաստատելու մասին» N 238 որոշման մեջ կատարել փոփոխություններ.

1) որոշմամբ հաստատված հավելվածում

ա.«Շահումյանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «8.Սադոյան Աննա – ծնող» բառերը փոխարինել «8.Համբարձումյան Լիլիթ– ծնող» բառերով:

բ.«Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում «7.Ասատրյան Սիմոն– ծնող» բառերը փոխարինել «7.Թովմասյան Հերմինե – ծնող» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ